ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատության կողմից մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ – ի <<դասվար>> /19 դասաժամ/, <<երաժշտություն>> /3 դասաժամ/ և <<կերպարվեստ>> /3 դասաժամ/ հանրակրթության պետական նոր չափորոշչով ուսուցում իրականացնող դասարանների ուսուցիչների դեպքում՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան>> առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անվկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. *Դիմում /Ձև 1/,*
2. *Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*
3. *Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/, միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ,*
4. *Անձը հաստատող փաստաթուղթ,*
5. *<< Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,*
6. *Ինքնակենսագրություն /Ձև 5/,*
7. *Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
8. *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
9. *Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/*
10. *Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,*

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ փետրվարի 28-ից մինչև 2025թ մարտի 13-ը ներառյալ, ամեն օր՝ 9:00-ից 13:00 բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ***2025թ մարտի 18-ին,*** **ժամը 15:00-ին** ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Մասիս, Շիրակի 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094-111-888 հեռախոսահամարով: